ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 հուլիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

91
(2941)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

67 ՄԼՆ ԾԱԽՄ՝ ԱՌԱՆՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ



ՀՀ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

Նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում			
Միջպետական հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	58	6,866,828,940	6,516,462,002
Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում	31	731,371,405	706,469,903
Ընդամենը	**362**	**69,455,865,030**	**66,917,987,995**

Հաշվեքննությամբ պարզվել է, որ վճարումները կատարվել են կանխավճարներ նախատեսված լինելու դեպքում՝ դրա համար սահմանված ընթացակարգերի պահպանմամբ, իսկ կատարողականների դիմաց վճարումների դեպքում՝ ընդունված հաշիվների հիման վրա կազմված հանձնման-ընդունման արձանագրությունների համաձայն, սակայն գնումների PPCM համակարգում դրանք չեն հրապարակվել: Փաստացի շուրջ 67 մլրդ դրամի կատարողական փաստաթղթերի թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովված չէ:

Հեղափոխության համար մեկ թիրախը, որին 2018 թվականին ուղված էր Նիկոլ Փաշինյանի նետը, կոռուպցիան էր, պետական գնումների ոչ թափանցիկությունը: Նիկոլ Փաշինյանը, ընդդիմադիր պատգամավոր եղած ժամանակ, Ազգային ժողովում եւ բոլոր հնարավոր բարձրախոսների առաջ պահանջում էր թափանցիկություն եւ բողոքում, որ նախկին իշխանությունը կոռուպցիայի բույն է, եւ այն անհապաղ քանդել է պետք:

Բանն այն է, որ ներկայացվում է քաղվածք ՀՀ Հաշվեքննիչ պալատի եզրակացությունից առ այն, որ միայն մեկ ոլորտում՝ ճանապարհաշինությունում, իշխանությունները 67 միլիարդ են ծախսել բյուջետային գումարներից. մեղմ ասած՝ ծախսել են առանց դրանց հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու, հրապարակելու:

Այս լայնամասշտաբ՝ թվով 362 գործարքներին առաջիկայում կլինի առավել մանրամասն անդրադարձ, միայն փաստենք, որ Հաշվեքննիչ պալատը այսօր այն եզակի կառույցներից է, որ դեռեւս աչք չի փակում Փաշինյանի միահեծան «դեմոկրատական» իշխանության չարաշահումների վրա:

Խնամքով անտեսված փաստաթղթերը հիրավի փլուզում են ժամանակին Փաշինյանի կողմից ներկայացրած հեղափոխական արդյունքները:

«Ժողովուրդ» օրաթերթը որոշ ՔՊ-ականներից փորձեց հարցերի պատասխան ստանալ, թե ինչպես է ստացվել, որ ծախսի չափն արձանագրվել է, բայց փաստաթղթային որեւէ հիմնավորում չկա:

ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Վահագն Ալեքսանյանը նշեց, որ սա ամենեւին իր ոլորտը չէ, սակայն պատասխաններ կարող ենք ակնկալել տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության եւ բնապահպանության հարցերի կամ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովներից:

Պատասխաններ, իհարկե, կփորձենք ստանալ, սակայն դրանց արդյունքները խոստումնալից կլինեն, թե ոչ, ասել չենք կարող:

Կառավարության ղեկավար Նիկոլ Փաշինյանը 2024 թվականի հունվարին երջանկություն պարգեւեց ՀՀ ժողովրդին՝հայտարարելով, որ Ամուլսարի հանքի շահագործող «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետությանն է նվիրել բաժնետոմսերի 12.5 տոկոսը, եւ որ դրանք իրենցը՝կառավարությանը չեն, այլ ՀՀ հպարտ քաղաքացունն ու ժողովրդինն են: Ստացվում է, որ մենք, բոլորովին անտեղյակ, ստանում ենք «նվեր» մի կազմակերպության բաժնետոմսեր, որը, 2023 թվականի պաշտոնական արդյունքներով, հարկային վնասի մեծությամբ 11-րդն է, ինչն աննախադեպ բացասական ցուցանիշ է: Թե ինչ կասեր նման «նվեր» ստանալիս նախկին կառավարության հասցեին ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանը, թողնում ենք ընթերցողի երեւակայությանը, սակայն փաստ է, որ գեղեցիկ եւ շքեղ բառերի տակ այլ բան է թաքնված:

Կուտակային կենսաթոշակների՝ ամիսներ շարունակ ձգվող հարցը իսկական պատուհաս է դարձել բռնի տեղահանված արցախցիների համար: 2019 թվականից նրանց կուտակած կենսաթոշակային գումարների ճակատագիրն անորոշ է մնում, իսկ պատկան մարմինները տարբեր պատճառաբանություններով ձգձգում են հարցը, ինչի պատճառով բազմաթիվ սոցիալական խնդիրների առջեւ կանգնած արցախցիները չեն կարողանում ստանալ իրենց հասանելիք գումարը: Այսպիսով՝ դեռ այս տարվա սկզբին՝ փետրվար-մարտ ամիսներին, Արցախի խորհրդարանն արտահերթ նիստով համապատասխան փոփոխություններ արեց «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում, որ այն արցախցիները, ովքեր ուզում են շուտ ստանալ իրենց կուտակած միջոցները, կարողանան գումարը վերցնել, երբ իրենց անհրաժեշտ է: Հայաստանի խորհրդարանն էլ, հունիսի 11-ին հրավիրված արտահերթ նիստերի ժամանակ, ընդունեց օրինագիծ, որով ԼՂ-ի կուտակային համակարգում ձեւավորված կենսաթոշակային խնայողությունները տեղափոխվում են ՀՀ-ում գործող կենսաթոշակային ֆոնդեր: Արցախցիները, սակայն, արդեն տեւական ժամանակ է՝ չեն կարողանում ստանալ գումարները, դիմում են տարբեր պատկան մարմինների, սակայն հարցը մեկը մյուսի վրա են գցում: Ինչպես Արցախի ՄԻՊ Գեղամ Ստեփանյանն էր հայտնել՝ խոսքն ընդհանուր առմամբ մոտ 17 մլրդ դրամի եւ մոտ 34,5 հազար շահառուի մասին է: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Արցախի պատգամավորները օրերս քննարկում են ունեցել Հայաստանի ընդդիմադիր պատգամավորների հետ, որպեսզի վերջիններս կարողանան խորհրդարանում հարցին լուծում տալ: Մեզ հետ զրույցում «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանն ասաց, որ պատրաստվում են օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալ, որը կկարգավորի խնդիրը եւ հնարավորություն կտա արցախցիներին ստանալու իրենց հասանելիք գումարը: Եթե ՔՊ-ն մերժի այն, ինչը շատ հավանական է, ապա ընդդիմադիրները դիմելու են Սահմանադրական դատարան:

Վարչապետի աշխատակազմի խմիչքի մատակարարի շահույթը գրեթե կրկնակի պակասել է: Ինչին է պարտական նման վստահության համար «Վինո Վինո» ՍՊԸ-ն, թերեւս հայտնի կդառնա հետագայում, քանզի ՍՊԸ-ն ՀՀ հարյուրավոր ոգելից խմիչք վաճառող կազմակերպություններից եզակին է, որը «մեկ անձից» գնման ռեժիմով Նիկոլ Փաշինյանի հիմնարկին պարբերաբար մատակարարում է խմիչք: Տարակուսելին այն է, որ հիշյալ մատակարարումների եւ ՀՀ տնտեսական աճի ֆոնին՝ «Վինո Վինո» ՍՊԸ-ի շահույթը վիթխարի անկում է ապրում՝ 2022 թվականի 734.7 միլիոն դրամի համեմատ 2023 թվականի շահույթը դարձել է 468.4 միլիոն դրամ: Սա կարող է իրատեսական լինել, եթե օրինակ, որեւէ գնորդ ապրանքի դիմաց «փողը չի տալիս» կամ կազմակերպությունը այնքան արտոնյալ վիճակ է վաստակել, որ կարողանում է նվազ արտացոլել հարկվող շահույթը:

VINO&
VINO

ԶՐՈՒՅՑ

«ԻՆՉ ԱԴՐԲԵՋԱՆՆ ԱՍԵԼ Է՝ ԱՐԵԼ Է». ՇԱՐՄԱԶԱՆՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը հայտարարել է, որ եթե Նիկոլ Փաշինյանի հեռախոսը մի քանի տողով վերցնեն ու անհասանելի լինի, ՔՊ-ն չի իմանա՝ ինչպես վարվի, քանի որ հրահանգներ չեն լինի:

-Պարոն Շարմազանով, իշխանությունն ու իշխանությանը հարող ուժերը արդեն սպառված եւ մարած են համարում Բագրատ սրբազանի գլխավորած «Տավուշը հանուն հայրենիքի» շարժումը: Ավելին՝ Նիկոլ Փաշինյանն ասում է, որ քաղաքացիները ընդունում են իրական եւ պատմական Հայաստանների մասին մեր տեսակետը այդ պատճառով էլ ընդդիմադիր որեւէ շարժում չի հաջողում, քանի որ դուք էլ մասնակցում էիք շարժման հանրահավաքներին, խնդրում ենք՝ մեկնաբանեք այս արտահայտությունը եւ այս տեսակետը:

-Քանի որ հարցը մի քանի շերտ է ենթադրում, հերթով անդրադառնամ բոլոր շերտերին:

Շարժման մասին, կարծում եմ, ավելի օբյեկտիվ կլինի շարժման առաջնորդը եւ անդամները մեկնաբանություն տան: Սակայն կարող եմ գնահատական տալ ազգային ընդվզման եւ Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակի վերաբերյալ. Հայաստանում կա կոնսենսուս Նիկոլ Փաշինյանի հեռացման վերաբերյալ: Քաղաքացիների ճնշող մեծամասնությունը չի պաշտպանում նիկոլիզմի՝ Հայաստանի ադրբեջանացման օրակարգը. սա փաստ է:

Ինչ վերաբերում է շարժումները չհաջողելու մասին անհեթեթ տեսակետին՝ առ այն, որ ժողովուրդը համաձայն է իշխանության հետ, ապա դա տգետ եւ անտրամաբանական գնահատական է: Օրինակ՝ 428-ից 885 թվականը Հայաստանը չի եղել անկախ. ստացվում է՝ եթե Հայաստանը եղել է բյուզանդական, ապա պարսկա-բյուզանդական, արաբական կամ պարսկական լծի տակ նշանակում է, թե ժողովուրդը այդ չորսուկես դարը երջանիկ է ապրել, որ եթե անկախությունը վերականգնել չի ստացվել, ուրեմն համաձա՞յն է եղել լծի տակ ապրելուն: Սա նիկոլիստաթուրքական լուծ է: Չկա Հայաստանի անկախություն, կա Հայաստանի ադրբեջանականացում եւ Էրդողանի ու Ալիեւի քմահաճույքներով առաջնորդվող ռեժիմ՝ Նիկոլ Փաշինյանի ռեժիմ, բայց սա չի նշանակում, որ Հայկը Բելին չի հաղթելու: Կլինի դիմադրություն, կլինի Սրբազան, կլինի այլ որեւէ շարժում: Շարժումների ձեւն է փոխվում, բայց բոլորի բովանդակությունը նույնն է՝ Հայաստանի ազգային պետականության վերականգնում եւ Հայաստանում պանթուրքիստական ուժերի վերջնական հաղթանակի տապալում:

Ինչ վերաբերում է իրական եւ պատմական Հայաստաններին, ապա ժողովուրդը ապրում է թուրք-նատօական ռեժիմի տակ: Եթե նրան սատարեին, ոչ թե մի քանի տասնյակով հեծանիվի շքերթներ կաներ, այլ Բագրատ սրբազանի նման հրապարակը կլցներ: Կարո՞ղ է, թող երկու օրում լցնի: 2018 թվականին երկու ժամում Բաղրամյան պողոտա էր լցնում ու Ազգային ժողովի վրա հարձակվում, հիմա թող անի. կարո՞ղ է: Հայ ժողովուրդը ոնց կարող է պաշտպանել մեկին, ով Արցախ է հանձնել, ով գիտակցված 5000 զոհ է տվել, ով Շուշի է հանձնել, ով Արարատ լեռից է հրաժարվում, ով այսօր անկախության հռչակագրից ու Սահմանադրությունից է հրաժարվում, եռաբլուրից է հրաժարվում, Ալիեւից ավելի լավ է հիմնավորում այն, որ Արցախն Ադրբեջանի կազմում պիտի լինի:

Նա պարզապես, թուրքերի հետ միասին, պատերազմով շանտաժ է անում ժողովրդին: Սա պատմության առաջին դեպքն է, որ պետությունը ոչ թե զինված պայքարի կոչ է անում, ոչ թե զինված ուժերի բարեփոխման, ռազմական սպառազինություն ստանալու կամ դաշնակիցների հետ հարաբերությունների ամրացման կոչ է անում այլ ասում է՝ խաղաղություն: Ի՞նչ խաղաղություն, այդ խաղաղությունը կար. գերեզմանում էլ է խաղաղություն, Թուրքիայի հայ համայնքն էլ է խաղաղ ապրում, Արցախում է խաղաղ հիմա, բայց հայ չկա. սա է Նիկոլի բերած խաղաղությունը: Եթե ուզում եք՝ Հայաստանի Հանրապետությունում էլ այդպես լինի, ինչ ասեմ:

Հայաստանն ամբողջությամբ ենթարկեցրել են Թուրքիային ու թիմով դա ներկայացնում են՝ որպես հաղթանակ:

-Պարոն Շարմազանով ՀՀ-ն հայտարարել է, որ մեկ ամսում պատրաստ է ստորագրել խաղաղության պայմանագիրը, իսկ Ալիեւը ասել է, որ կստորագրի միայն, երբ ՀՀ Սահմանադրությունը փոխվի: Ավելի վաղ տեղեկություն տարածվեց, որ Ադրբեջանը պահանջում է հրաժարվել իր դեմ ներկայացված դատական հայցերից: Կգնամ արդյոք Հայաստանը նման քայլի:

-Մինչեւ հիմա ի՞նչ է ասել Ադրբեջանը, որ Նիկոլը չի արել: Ամեն բան արել է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՆՉ ՈՒՆԵՑՎԱԾՔՈՎ ՀԵՌԱՑԱՎ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահ Արտյոմ Մեհրաբյանը հուլիսի 1-ից ազատվել է պաշտոնից:

Մեհրաբյանը պաշտոնի նշանակվել էր 2022 թվականի մայիսին:

Հավելենք, որ ռազմարդյունաբերության կոմիտեն ԲՏԱ նախարարությանն էր միացել 2019 թվականին:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է՝ ինչ ունեցվածքով հեռացավ պաշտոնից կոմիտեի նախագահը:

Մեհրաբյանը հայտարարագրել է 1 անշարժ գույք՝ 1 բնակարան բազմաբնակարան շենքում, որը ձեռք է բերվել 2017 թվականին Երեւան քաղաքում: Կոմիտեի նախագահը չի հայտարարագրել որեւէ տրանսպորտային միջոց:

Բանկային հաշիվների մնացորդները կազմել են 130 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 10 մլն դրամ:

Ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 16 մլն 327 հազար դրամ, որից 14 մլն 101 հազարը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունից՝ որպես աշխատանքի վարձատրություն:

Արտյոմ Մեհրաբյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 45 մլն 404 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է: Հենց այս պատճառով կոմիտեի նախագահը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 2 մլն 226 հազար դրամ, որը եկամտահարկի վերադարձի օրենքով հիփոթեքի մայր գումարը մարելու համար է:

Հիշեցնենք, որ Արտյոմ Մեհրաբյանը եղել է Չարենցավանի հաստոցաշինական գործարանի տնօրեն: Նա «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության փոխնախագահ, վաղամեռիկ Ղուկաս Մեհրաբյանի որդին է: Նա 2019 թվականի փետրվարին նշանակվել էր Աջափնյակ վարչական շրջանի աշխատակազմի ղեկավար, ապա ռազմարդյունաբերության կոմիտեի նախագահ:

Հիշելով, որ չապացուցված թեորեմ կա իշխանության շրջանում, որ խնամի-ծանոթ-բարեկամ հանգույցը հեղափոխությունից հետո չպետք է գործեր՝ բերենք փաստարկներ, որ ավելի արմատացած այն երբեք չի եղել: Բանն այն է, որ Մեհրաբյանի կինը՝ Աննա Բալայանը, աշխատանքային գործունեություն է ծավալում ամուսնու նախկին աշխատավայրում՝ Աջափնյակ վարչական շրջանի թաղապետարանում՝ որպես ընդհանուր բաժնի ղեկավար:

Հենց այս տեսքն ունի իշխանության կողմից սիրված «պոզով եւ պոչով» կոռուպցիան:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԻՐԶՈՅԱՆԸ՝ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայ-ադրեջանական խաղաղության պայմանագիրը մեկ ամիս ինտենսիվ աշխատելու դեպքում կարելի է ստորագրել:

Այս մասին Թբիլիսի կատարած այցի ժամանակ հայտարարել է Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը՝ Վրաստանի ԱԳ նախարար Իլյա Դարչիաշվիլիի հետ երկկողմ հանդիպմանը հաջորդած համատեղ ասուլիսի ընթացքում:

«Մենք կարծում ենք, որ սա պատմական իրադարձություն է մեր տարածաշրջանում կայուն խաղաղության պահպանման եւ հաստատման համար: Կցանկանայի նաեւ քննարկել ենթակառուցվածքների եւ հաղորդակցությունների ամբողջական բացման կարեւորությունը տարածաշրջանում կայունության զարգացման եւ ապահովման տեսանկյունից: Մենք կառուցողականորեն տրամադրված ենք Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ ենթակառուցվածքների եւ տրանսպորտային հաղորդակցությունների ամբողջական ապաշրջափակմանը», - ասել է նա:

ՌԴ ԱԳՆ ՏԵՍԱԿԵՏԸ

«Հայաստանին եւ Ադրբեջանին ՆԱՏՕ-ի վաշինգտոնյան գագաթնաժողովին հրավիրելով՝ Արեւմուտքը ցանկանում է Ռուսաստանի բարեկամներին պոկել վերջինիս հետ համագործակցությունից», - ասել է ՌԴ ԱԳՆ տեղեկատվության եւ մամուլի դեպարտամենտի փոխտնօրեն Անդրեյ Նաստասինը: Այս մասին գրում է news.ru-ն:

Նրա խոսքով՝ «սա ամերիկացիների՝ իրենց կործանարար ազդեցությունը տարածելու փորձերի հերթական օրինակն է»:

«Սա ամերիկացիների՝ իրենց կործանարար ազդեցությունն աշխարհի բոլոր տարածաշրջաններում տարածելու փորձերի եւս մեկ օրինակ է: Եվրոպայում թույլ կամք ունեցող արբանյակների լիակատար ներողամտությամբ Վաշինգտոնը խնդիր է դնում մեր ընկերներին եւ հարեւաններին պոկել Ռուսաստանի հետ համագործակցությունից»,- ասել է նա:

Ավելի վաղ հայտնի էր դարձել, որ ԱՄՆ-ն հրավեր է ուղարկել Երեւանին եւ Բաքվին ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի շրջանակում գործընկերների հանդիպմանը: Միջոցառումը տեղի կունենա հուլիսի 9-ից 11-ն ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգտոնում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՔԱՌՍԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՆՈՒԲԱՐԱՇԵՆՈՒՄ

Նուբարաշեն վարչական շրջանի 11-րդ փողոցում քաոսային իրավիճակ է տիրում:

Վերը նշված հասցեի խաղահրապարակում արդեն 6 ամիս է, ինչ կոտրված են շատ կարուսելներ, այդ թվում՝ ճոճանակներ, սահնակներ, ինչի պատճառով երեխաները չեն կարողանում խաղալ իրենց բակում եւ ստիպված գնում են ուրիշ բակեր:

Բնակիչները ArmLur.am-ի հետ զրույցում նշել են, որ թաղապետարանն այս ամենին ուշադրություն չի դարձնում, ճոճանակները չի վերանորոգում եւ դրանց վիճակը գնալով ավելի վտանգավոր է դառնում, քանի որ ամեն պահի կարող է շուռ գալ:

Չնայած այս ամենին՝խնդիրները այսքանով չեն սահմանափակվում: Բնակիչներից մեկն էլ իր դժգոհությունը հայտնեց այն մասին, որ երեկոյան ժամը 8-ից հետո չեն կարողանում դուրս գալ բակ, քանի որ ամեն քայլափոխի գազազած շներ կան:

«Ամեն բակում 6-7 շուն կա, անգամ շքամուտքեր են մտնում: Վտանգավոր եւ հիվանդ շներ են: Չկա մի այնպիսի օր, որ երեխայի վրա չհարձակվեն: Անգամ դպրոց չենք կարողանում երեխաներին միայնակ ուղարկել, քանի որ դպրոցի դիմաց 4-5 շուն կա նստած: Ահ ու սարսափի մեջ ենք»,- ասաց մեր զրուցակիցը:

ArmLur.am-ը կապ հաստատեց Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավար Անդրանիկ Գասպարյանի հետ՝ պարզելու՝ ինչու ուշադրություն չեն դարձնում խաղահրապարակներում տիրող իրավիճակին եւ ի՞նչ են պատրաստվում անել թափառող շների հարցով:

Մեզ հետ զրույցում վարչական շրջանի ղեկավարն ասաց, որ խաղահրապարակներում նորմալ վիճակ է, հնարավոր է, որ մի քանի դետալ պակաս լինի կարուսելների վրայից. «Խաղահրապարակները նորմալ վիճակում են, այնտեղ կարող է մեկ կամ երկու դետալային ինչ-որ բան կոտրված լինի: Այս ամսվա 20-ին դետալներ են բերելու, որ մաշված դետալները դրանցով փոխարինվեն, իսկ մնացած խաղահրապարակները իդեալական վիճակում են: Նույնիսկ հիմա էլ սկսել ենք կարուսելներում ռեզինից հատակներ դնել, որ ավելի հարմար լինի»:

Անդրադառնալով նաեւ թափառող շներին՝ Անդրանիկ Գասպարյանն ասաց, որ կա առանձին հիմնարկ, որը զբաղվում է այս հարցով:

«Թափառող շներով զբաղվող առանձին հիմնարկ կա, գալիս են՝մենք էլ հետեւում ենք, տանում ստերջացնում են եւ բերում, իսկ որը որ վտանգավոր է, էլ հետ չեն բերում»,-նշեց Գասպարյանը:

ՀՈՂԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ՎՆԱՍԻ ՊԱՏՃԱՌ

ՀՀԷԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ԽԱՓԱՆՎԱԾ ԵՎ ՎՏԱՆԳՎԱԾ

Աբովյան խոշորացված համայնքի Պտղնի գյուղին հարող Սեւան-Երեւան մայրուղու հատվածում գտնվող թմբերը փորվել են, հողը տեղափոխել, լցրել են հարակից ձորակը: Արդյունքում վնասվել է «Գնդասար ՓՀԷԿ» ՍՊԸ-ին պատկանող խողովակաշարը, որի արդյունքում տուժել է ե՛ւ պետությունը, ե՛ւ ՓՀԷԿ-ի սեփականատերը:

Ամեն բան պատմենք հենց սկզբից.

«2023 թվականի հուլիս ամսին ինձ տեղեկացրին, որ հուլիս ամսին ՓՀԷԿ-ի սերվիտուտով հատկացված տարածքի մոտ հողային աշխատանքներ են կատարվում: Ճշտեցինք՝ ովքեր են իրականացնում աշխատանքները եւ հանդիպեցինք նրանց հետ: Երբ հանդիպեցինք, ինձ ասացին. «Սխալ տեղ ես կառուցել քո ՀԷԿ-ը, խողովակաշարերը պիտի հավաքես, տանես, որովհետեւ այս ամբողջ տարածքը՝ ձորը ներառյալ, մենք ենք ձեռք բերել, մեր սեփականն է»»,- ասաց «Գնդասար ՓՀԷԿ»-ի հիմնադիր Սարգիս Գամբուրյանը:

Գնդեսար ՓՀԷԿ-ի եւ Պտղնի համայնքապետի միջեւ «Կամավոր սերվիտուտի պայմանագիր» կնքվել է 2012 թվականի մայիսի 10-ին: 12 տարի անց ՀԷԿ-ի աշխատանքը խափանված է եւ վտանգված: Սարգիս Գամբուրյանն, ով ՀԷԿ-ի հիմնադիրն է, փաստաթղթեր է ներկայացրել, թե ինչպես է ձեռք բերել հողակտորը, ինչպես է ստացել կառուցապատման համապատասխան թույլտվությունը, տարածքում գտնվող իրեն պատկանող հողամասի սեփականության վկայականը, սակայն ոչինչ չի օգնել՝ աշխատանքները սկսվել են եւ շարունակվում են:

«Ես ստիպված դիմեցի Աբովյան քաղաքի համայնքապետարան՝ իմ խոսքերը հիմնավորելու համար: Պատասխան ստացա, որ՝ այո՛, ճիշտ եք. հողը համայնքին է պատկանում, որը սերվիտուտի պայմանագրով տրված է ինձ ՀԷԿ-ի կառուցման համար: Փորձեցի կապվել աշխատանքներ իրականացնողների հետ՝ գրությունը ցույց տալու համար, քանի որ աշխատանքների հասել էին խողովակաշարի սահմանագծին, սակայն ավելի արագացված տեմպով սկսվեցին աշխատանքներ իրականացնել:» ,- պատմում է Գամբուրյանը:

Ակունք գետը համարվում է սելավատար, որը ոռոգում է նաեւ Երեւան քաղաքի Ավան վարչական շրջանը, որի վթարման արդյունքում բնապահպանական աղետը կլինի անխուսափելի եւ ամեն ինչ տանում է դրան: Google Earth-ում կարող ենք տեսնել, թե ինչպես է Երեւան-Սեւան մայրուղուն հարող տարածքում փոփոխվել ռելիեֆը: Օրինակ՝ 2014 թվականի քարտեզում ակնհայտ երեւում է կանաչապատ տարածքը եւ գետը, Google-ի կողմից արված հաջորդ նկարը 2015 թվականին է արված, հստակ երեւում է, որ աշխատանքներն արդեն սկսվել են, 2016, 2017, 2018, 2019-ին լայնածավալ հողալցման աշխատանքներ են իրականացվել: 2023 թվականի ապրիլին կանաչապատ տարածքը դարձել է անապատային տարածք: Հարակից բլուրը քանդել եւ հողը լցրել են ձորակը, իսկ այժմ հարթեցված բլուրի տարածքը վաճառվում է. հեռախոսահամարն անհասանելի էր, բայց ըստ մեր տեղեկությունների՝ տարածքի հողամասը վաճառվում է 4 մլն ԱՄՆ դոլարով:

Սարգիս Գամբուրյանը բազմաթիվ դիմումներ, գրություններ եւ զեկուցագրեր է հղել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանին, Տեսչական մարմնի Կոտայքի տարածքային բաժնի պետ Դավիթ Դավթյանին, ՀՀ ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանին, Ջրային կոմիտեի նախագահ Վահագն Գեւորգյանին եւ այլ կառույցների եւս: «Գնդասար ՓՀԷԿ»-ի սեփականատերը ոչ մի կառույցից մինչ այսօր չի ստացել որեւէ պատասխան, սակայն տեղյակ է, որ վարույթ են հարուցել, բայց թե ինչ ընթացք ունի վարույթը, տեղյակ չէ:

«Ինչքան ես տեղյակ եմ՝ ինչ-որ վարույթ է հարուցվել պետությանը վնաս հասցնելու հանգամանքով: Մեկ անգամ ԱԱԾ-ի Աբովյանի բաժին են ինձ կանչել, դեռ պատասխան չկա:»

Հողատարածքը, որում հողաշինական աշխատանքներից հետո ընդհատվել է ՓՀԷԿ-ի աշխատանքը, դադարել է նաեւ Ակունք գետի հոսքը, գետի մի մասը արդեն ճահճացել է: Լցոնված հողի արդյունքում վնասված հողաշերտի տակից դուրս եկող ջուրը լցվում է ՀՀ ՊՆ հատուկ պահպանվող տարածք, որի մի մասը հայտնվել է ճահճի մեջ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՄՆ-Ի Պ ԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ Է ԺԱՄԱՆԵԼ

ԱՄՆ սենատոր Ռոջեր Վիքերի գլխավորած պատվիրակությունը ժամանել է Հայաստան:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ պատվիրակությունը Հայաստան է եկել երեկ եւ այստեղ կլինի մինչեւ հուլիսի 5-ը:

Սենատոր Վիքերը հանրապետական ավագ անդամն է ԱՄՆ Հելսինկյան հանձնաժողովում, որը հայտնի է որպես Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության հանձնաժողով: Սենատոր Վիքերը նաեւ Սենատի Ջինված ծառայությունների հանձնաժողովի հանրապետական ավագ անդամն է:

ԱՄՆ սենատորի գլխավորած պատվիրակության կազմում են Հելսինկյան հանձնաժողովի նախագահ, ներկայացուցիչների պալատի անդամ Ջո Վիլսոնը, համանախագահ, սենատոր Բեն Քարդինը, որը նաեւ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահն է, ինչպես նաեւ սենատոր Ջոն Քորնին, ներկայացուցիչների պալատի անդամ Ռոբերտ Ադերհոլտը, ներկայացուցիչների պալատի անդամ Ռիչարդ Հադսոնը , ներկայացուցիչների պալատի անդամ Թրենթ Քելին եւ ներկայացուցիչների պալատի անդամ Էնդի Հերիսը:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕԿՈՒՊԱՑԻՈՆ ՆՈՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ Է ԴՐԵԼ

«Թաթոյան» հիմնադրամը հայտարարություն է տարածել, որում, մասնավորապես, ասվում է. «Ադրբեջան «խաղաղասեր» իշխանական քարոզչությունը Հայաստանին նոր օկուպացիոն պահանջներն է ներկայացնում՝ այս անգամ առավել սթափեցնող ցանկով:

Ըստ այդմ՝ ՀՀ Սահմանադրության մեջ պետք է կատարել, այսպես կոչված, «արեւմտյան ադրբեջանցիների վերաբնակեցմանն» առնչվող 2 փոփոխություն՝

1) «արեւմտյան ադրբեջանցիների» անվտանգության ապահովում՝ օտարերկրյա միջնորդական առաքելության երաշխավորությամբ: Հայաստանում պետք է տեղակայվեն զինված ուժեր այն երկրից, որը դաշնակից է Ադրբեջանին ու վայելում է վստահություն (ակնհայտ է չէ՞ որ երկիրն է):

Քանի որ Ադրբեջանը չի վստահում Հայաստանին, ինչ-որ փուլից սկսած «արեւմտյան ադրբեջանցիներն» իրենք պետք է ունենան սեփական անվտանգությունը կազմակերպելու հնարավորություն՝ զինված ստորաբաժանումներ ստեղծելով.

2) «արեւմտյան ադրբեջանցիների» ադրբեջաներենով կրթության իրավունքի ապահովում:

Այս առաջարկները «Արեւմտյան Ադրբեջան» օկուպացիոն հայեցակարգի նոր զարգացումներ են, որոնք հիմնված են բացարձակ կեղծիքի վրա, որ անտեսել չի կարելի: Ընդ որում, ադրբեջանական իշխանական տարբեր աղբյուրներ նշում են, որ «վերաբնակեցման» ենթակաների թիվը 300,000 է:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում 2024 թվականի հունիսի 26-ին նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում ստացվել են փաստական տվյալներ Երեւան քաղաքի 43-ամյա բնակչի կողմից առերեւույթ լրտեսության, պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ հանձնելու եւ թշնամական գործունեություն իրականացնելու համար օտարերկրյա հատուկ ծառայությունների ներկայացուցչին այլ օգնություն ցույց տալու եղանակներով պետական դավաճանություն կատարելու վերաբերյալ:



Մասնավորապես, ՀՀ ԱԱԾ աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ինչպես նաեւ վարույթն իրականացնող մարմնի կողմից կատարված քննչական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում պարզվել է, որ նշված անձը, հանդիսանալով պայմանագրային զինծառայող եւ կոչումով կրտսեր սերժանտ, «odnoklassniki.ru» սոցիալական ցանցում առկա՝ իր տվյալներով օգտահաշվով 2023թ. հունվար ամսից կապ է հաստատել ադրբեջանական հատուկ ծառայությունների ներկայացուցիչ հանդիսացող, նույն սոցիալական կայքում մտացածին անվամբ օգտահաշվի ներքո քողարկված անձի հետ: Ծավալված սիրային զրույցների արդյունքում, վերջինս մտերիմ հարաբերություններ է հաստատել ՀՀ ԶՈՒ նշված պայմանագրային զինծառայողի հետ եւ, հավաքագրել վերջինիս:

Դրանից հետո 43-ամյա տղամարդը, սեռական շահագրգռվածությունից ելնելով, հաղորդակցի հետ ձեւավորված շփումը շարունակական պահպանելու համար, վերջինիս առաջադրանքով 2023թ. հունվարի ամիսց մինչեւ 2024թ. փետրվար ամիսն ընկած ժամանակահատվածում հավաքել ու հանձնել է իրենց ստորաբաժանման պահպանության ներքո գտնվող մարտական դիրքի սպառազինության, զինատեսակների քանակի եւ տեսակի, մարտական դիրքերի տեղակայման վայրերի, հրամանատարական կազմի անհատական տվյալների, մարտական դիրքերի մի շարք փաստաթղթերի եւ այլնի վերաբերյալ պետական, ծառայողական գաղտնիք կազմող, ինչպես նաեւ ռազմական բնագավառի այլ տեղեկություններ հանդիսացող տվյալներ: Այդ գործողություններով վնաս են պատճառվել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, տարածքային անձեռնմխելիությանը եւ արտաքին անվտանգությանը:

ՀՀ ԱԱԾ եւ ՀՀ ՔԿ ծառայողների կողմից իրականացված գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստերի հիման վրա միջնորդություն է ներկայացվել հսկողություն իրականացնող դատախազին՝ 43-ամյա տղամարդու նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 418-րդ հոդվածի 1-ին մասով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը բավարարվել է:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է դատարան ներկայացնելու նպատակով ազատության մեջ գտնվող մեղադրյալին ձերբակալելու որոշում, որի կատարումը հանձնարարվել է Հայաստանի Հանրապետության ԱԱԾ համապատասխան ստորաբաժանմանը:

Հուլիսի 2-ին վերջինս ձերբակալվել է, տվել ինքնախոստովանական ցուցմունք: Նրան մեղադրանք է ներկայացվել:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ 43-ամյա անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋ Է

«ՖԱՋԻՆ» ԿԱԼԱՆՔԻՑ ԱԶԱՏԱԾ ԴԱՏԱՎՈՐԸ

Հունիսի 11-ին Շիրանարաների փողոցում սպանված քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանին կալանքից ազատած դատավոր Արուսյակ Ալեքսանյանը Հակակոռուպցիոն դատարանում է:

Նա քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանին՝ «ֆազին» կալանքից ազատեց ու այդ պատճառով դատավորի դեմ քրեական գործ հարուցեցին՝ համարելով, որ նա անցել է պաշտոնեական լիազորությունները եւ ոչ օրինական ճանապարհով է ազատել Սերգեյ Գրիիգորյանին: Արդյունքում, նա այսօր կանգնել է դատարանի առաջ մի անձի ազատելու համար, ում օրերս սպանեցին:

Արուսյակ Ալեքսանյանին Հակակոռուպցիոն դատարանում հարց ուղղեցինք, որ այն անձին, ում նա ազատել է կալանքից, սպանել են, ինչ է մտածում նա այս ամենի մասին:

Ավելի վաղ հայտնել էինք, որ հունիսի 11-ին Շինարարների փողոցում քրեական հեղինակություն Սերգեյ Գրիգորյանի՝ «Ֆազի» սպանության օրը դեպքի վայրում զննություն է իրականացվել: Իրավապահները դեպքի վայրից քիչ հեռավորության վրա հայտնաբերել են զրահաբաճկոն, որի վրա գրված է եղել «POLICE»: Իրավապահները առգրավել են զրահաբաճկոնը ու չի բացառվում, որ այն կրել են ենթադրյալ մարդասպանները, իսկ հետո թողել են դեպքի վայրում ու հեռացել:

Շուտով կլրանա քրեական հեղինակություն «Ֆազի» սպանության 1 ամիսը, սակայն իրավապահ համակարգը դանդաղում է աղմկահարույց քրեական գործի բացահայտման հարցում, ինչը խիստ կասկածների տեղիք է տալիս, թե ինչու են լռում իրավապահները եւ ինչու դեպքից 21 օր անց դեռ անգամ չկա կասկածյալ:

Հավելենք, որ «Ֆազի» սպանության գործով այս պահին բազմաթիվ վարկածներ են քննվում, այդ թվում՝ կրիմինալ աշխարհում հայտնի Ռուստամ Ստեփանյանի՝ «չաղ Ռուստամ»-ի հետ իր հարաբերությունները, որոնք բավականին լարված են եղել: Նկատենք, սակայն, որ սպանության բացահայտման տեմպերը հուսադրող չեն: Լուրեր են պտտվում, որ Ռուստամ Ստեփանյանը՝ «չաղ Ռուստամ»-ը վայելում է իշխանությունների հովանավորչությունը:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԶՈՐԱՄԱՍՈՒՄ ՁԻՆՎՈՐ Է ՄԱՀԱՑԵԼ

Երեկ առավոտյան պաշտպանության նախարարությունը հայտնել էր, որ զինվոր է մահացել:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ երեկ մահացած պայմանագրային զինծառայողն ամուսնացած չէր, ապրում էր հարազատների հետ: Դեպքը եղել է Վարդենիսի զորամասում: Իրավապահներն այս պահին հարցաքննում են դիրքում գտնվող տղաներին, որոնք ասում են, թե որեւէ բան չեն տեսել: Ըստ նախնական վարկածի՝ պայմանագրային զինծառայողն ինքնասպան է եղել:

Հիշեցնենք, որ հուլիսի 3-ին՝ ժամը 00:45-ի սահմաններում, ՊՆ N զորամասի պահպանության տեղամասում, դեռեւս չպարզված հանգամանքներում կյանքի հետ անհամատեղելի հրազենային վնասվածք է ստացել պայմանագրային զինծառայող Սարգիս Արթուրի Խաչատրյանը: Դեպքի հանգամանքներն ամբողջովին պարզելու նպատակով ընթանում է քննություն:

ԱՆՁՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ ԵՐԿԱՐԱՁԳԵԼ

«Միգրացիա եւ քաղաքացիություն իրավաբանական գրասենյակի» տնօրեն Մնացական Բիչախչյանն իրազեկում է.

«Թեեւ վաղուց կատարվել են օրենսդրական փոփոխություններ, բայց կան անձինք, ովքեր տեղյակ չեն դրանց մասին:

-Եթե լրանում է անձնագրի ժամկետը, այն չի երկարաձգվում ոչ մի դեպքում. պետք է դիմել անձնագրի փոխանակման համար:

-Եթե լրացել է անձնագրի ժամկետը, անկախ նրանից երբ եք դիմում փոխանակման համար, որեւէ տուգանք չի գործում:

- Եթե ՀՀ քաղաքացին ստացել է այլ պետության քաղաքացիություն, ՀՀ իրավասու մարմնին տեղեկացնելու պարտականություն սահմանված չէ (բացառությամբ այն կատեգորիայի անձանց, ում արգելված է զբաղեցնել պաշտոն այլ պետության քաղաքացիություն ունենալու դեպքում):

- Եթե փոխում եք բնակության վայրը եւ ցանկանում եք հաշվառվել նոր վայրով, հաշվառումից դուրս գալու համար նախկին բնակության վայր ներկայանալ պետք չէ. նոր բնակության վայրի անձնագրայինը հաշվառելով ավտոմատ հանվում եք նախկին հասցեից»:

Բանն այն է, որ նախկինում հնարավոր էր անձնագրի ժամկետը երկարաձգել պարզապես ամսաթիվ փոխելով, իսկ այնժմ նախկին անձնագիրը մակնշվում է եւ դառնում է արխիվ:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 2-ից հուլիսի 3-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 97 դեպք, որից 3-ը՝նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԽԱԽՏՎԵԼ Է

Տավուշի մարզկենտրոն Իջեւանը Բերդ քաղաքին կապող, Տավուշի սահմանագոտին շրջանցող Գանձաքար-Իծաքար-Նավուր-Բերդ ավտոճանապարհի մաս կազմող, 35 կմ երկարություն ունեցող Գանձաքար-Իծաքար ճանապարհի հիմնանորոգումը սկսվեց 2022 թվականին. շինարարությունը նախատեսվում էր ավարտել 2023 թվականի սեպտեմբերին, այդ նպատակով պետական բյուջեից նախատեսված էր հատկացնել 4,5 միլիարդ դրամ: Շինարարական աշխատանքներն իրականացնում էր «Խաչիար» ՍՊԸ-ն: 2022 թվականին այդ ընկերությունը ճանապարհի 6 կիլոմետրանոց հատվածում թույլ գրունտի վրա ասֆալտապատում էր կատարել, ասֆալտը քանդվել էր, ընկերությունը այդ հատվածում նորից էր ասֆալտապատում արել: Ճանապարհի շինարարության պայմանագրի ժամկետը խախտվել է, կառավարությունը խզել է «Խաչիար» ընկերության հետ պայմանագիրը, նշված ճանապարհի կառուցապատման համար նոր մրցույթ հայտարարել: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ ներկայումս ո՞ր կազմակերպությունն է իրականացնում այդ ճանապարհի կառուցապատումը, աշխատանքների քանի՞ տոկոսն է արված, ե՞րբ շահագործման կհանձնվի կարեւոր այդ ավտոճանապարհը: Մարզպետարանից պատասխանել են. «Գանձաքար-Իծաքար ավտոճանապարհի կառուցապատումը իրականացվում է «Էկո բիլդինգ» շինարարական կազմակերպության կողմից, որն իրականացրել է Իծաքար-Հախում գետի հատվածի հողային աշխատանքները, ճանապարհի կառուցապատման ավարտի վերաբերյալ դիմեք կապալառու կազմակերպությանը»: Նավուր գյուղից տեղեկացանք, որ «Էկո բիլդինգ» շինարարական կազմակերպությունը Վայքից է, այն այս տարվա գարնանից հողային աշխատանքներ է կատարում: Գանձաքար-Իծաքար ճանապարհի կառուցման նոր ժամկետ է սահմանվել 250 օրը, այսինքն՝ այս տարի ռազմավարական նշանակության ճանապարհը պետք է գործարկվի: Սակայն, տարին արդեն կիսվում է, շինաշխատանքների զգալի մասը մնում է, դժվար թե շինարարական կազմակերպությունը կարողանա տեղավորվել սահմանված ժամկետում: Գանձաքարի վարչական ղեկավար Վարդգես Դովլաթբեկյանը հայտնեց, որ ճանապարհի Գանձաքարի հատվածում ճանապարհաշինարարները ճանապարհի եզրին ամրացնող գաբիոններ են տեղադրել, նրանք մեծ ծավալով աշխատում են ճանապարհի մյուս՝ Իծաքարի հատվածում: Բերդ համայնքի Իծաքար գյուղի բնակիչները հայտնեցին, որ «Էկո բիլդինգ» շինարարական կազմակերպությունն Իծաքարում արդեն կատարել է 1,5 կիլոմետր երկարությամբ՝ Իծաքարի գլխավոր փողոցի մայթերի եւ ջրահեռացման համակարգի կառուցումը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՆԳԻՍՏ

ՄՆԴԻ ԵՎ ԺԱՄԱՆՑԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՎԱՅՐԵՐԸ ԱԲՈՒ ԴԱԲԻՈՒՄ

Ամառային հանգիստ. մեկ տարի անհամբերությամբ սպասում ենք արձակուրդին, որն իսկապես արժե վայելել:



ArmLur.am-ը Ձեզ է ներկայացնում սնդի եւ ժամանցի վայրերն Աբու Դաբիում, որոնք արժե անպայման այցելել:

● **«Շեյխ Զայեդ» մեծ մզկիթ**

Այցելությունը թույլատրվում է 1 ժամ, առավոտյան 9-ից 10-ը:

● **«Ferrari World Abu Dhabi»**

Աշխարհում առաջին Ferrari-ի ֆիրմային թեմատիկ այգին է, որտեղ կան ռեստորաններ, խանութներ, ընտանեկան ժամանցի վայրեր: Ferrari World Abu Dhabi-ն Յաս կղզու հիմնական առանձնահատկությունն է՝ ԱՄԷ-ում ժամանցի եւ ժամանցի լավագույն ուղղությունը:

Այգին բաց է առավոտյան ժամը 10-ից մինչեւ երեկոյան 8-ը:

● **«Յաս» ջրաշխարհ**

Ջրաշխարհը գտնվում է Յաս կղզում: Այն ունի ավելի քան 40 խաղային ատրակցիոններ եւ իր այցելուներին ընդունում է առավոտյան ժամը 10-ից մինչեւ երեկոյան 7-ը:

● **Warner Bros Abu Dhabi**

Յաս կղզում գտնվող կենտրոնը ընկերության այս առաջին փակ այգին է: Այն բաց է առավոտյան ժամը 10-ից մինչեւ 7-ը եւ այստեղ ծախսում եք առնվազն 3 ժամ:

● **«Քասր ալ Ուաթան» (Ալ Ուաթան պալատ)**

Քասր Ալ Ուաթանը անհավանական, նոր եւ եզակի տեսարժան վայր է Արաբական Միացյալ Էմիրություններում: Պալատը մատնանշում է Միացյալ Էմիրությունների տեսլականն ու ապագայի տեսլականը: Պալատը ձեզ եզակի հնարավորություն է տալիս հիանալու շքեղ միջանցքներով, որոնք անպայման ձեզ կթողնեն իմաստալից փորձ. «Ուսումնասիրեք ցուցահանդեսներ, որոնք նշում են տարածաշրջանի հարուստ արաբական ժառանգությունը եւ ավելին իմացեք կառավարիչների եւ կառավարող հաստատությունների մասին, որոնք ձեւավորել են մեր մեծ ազգը»:

● **Աբու Դաբիի ազգային ջրային պարկ**

Այն աշխարհի լավագույն ջրային պարկերից է, որտեղ կարելի է տեսնել աշխարհի ամենամեծ փակ անձրեւային անտառը: Այստեղ կան 46 հազար կենդանիներ՝ 10 եզակի թեմատիկ գոտիներում, ինչպես նաեւ աշխարհի ամենաերկար ստորգետնյա թունելը:

Այն բաց է առավոտյան ժամը 10-ից մինչեւ երեկոյան ժամը 10-ը:

● **«Լուվր Աբու Դաբի»**

Այն այցելուների համար բաց է առավոտյան ժամը 10-ից մինչեւ ժամը 18:30. Մեկ տոմսի արժեքը՝ 18.85 դոլար:

● **«Յաս» կղզու ջրային աշխարհ**

Փակ ջրային աշխարհ է, որն ունի ավելի քան 100 ժամանցի կետ: Այն այցելուների համար բաց է առավոտյան ժամը 10-ից մինչեւ երեկոյան 6-ը:

Աբու Դաբի այցելության ժամանակ չպետք է մոռանալ զբոսանքն անապատում, որի արժեքը միջինում տատանվում է 60 դոլարի շրջակայքում, քաղաքային զբոսանքը, որն արժե մոտ 200 դոլար, ինչպես նաեւ մզկիթ, պալատ եւ աշտարակ այցելությունը, որի արժեքը միջինում 100 դոլարի շուրջ է տատանվում:

Ուրախ ամառային արձակուրդներ:

ՀՈՒՐԻ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԻԱՆԳԱՄԻՑ՝ ԵՐԿՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Առաջիկա տարիներին Չինաստանը նախատեսում է առաքելություններ ուղարկել դեպի Մարս (Tianwen-3) եւ դեպի Յուպիտեր (Tianwen-4): Այս մասին հայտնում է China Daily թերթը:

Նշվում է, որ Tianwen-3 առաքելության շրջանակներում նախատեսվում է վայրէջք կատարել Մարսի մակերեւույթին, հավաքել այդ մոլորակի հողի նմուշներ եւ ուղարկել Երկիր: Առաքելությունը նախատեսվում է գործարկել 2030 թ.-ին:

Tianwen-4 ավտոմատ միջմոլորակային կայանը, որը Յուպիտերի համակարգն ուսումնասիրելու համար է, նախատեսվում է գործարկել մոտավորապես նույն ժամանակ:

Չինացի մասնագետներն արդեն սկսել են աշխատել երկու առաքելությունների վրա:

Թերթը հիշեցնում է, որ հունիսի 25-ին Չինաստանը մարդկության պատմության մեջ առաջին անգամ Երկիր է հասցրել Լուսնի հակառակ կողմի հողից նմուշառումներ:

ՀԱՆԳԻՍՏԸ՝ ՍԵՎԱՆՈՒՄ

Ամառային հանգստի ժամանակները արդեն սկսվել են: Շատ քաղաքացիներ իրենց հանգիստն անցկացնում են Հայաստանում: Ամեն տարի հայերի մեծամասնությունը պարտադիր կերպով այցելում է կապուտաչյա Սեւան:

«Ժողովուրդ» օրաթերթն այս անգամ անդրադարձել է Սեւանա լճի ափամերձ հատվածում գտնվող տնակների արժեքներին՝ հասկանալու համար՝ ի՞նչ արժե հանգիստը այնտեղ:

Այսպիսով՝ **«Լողափ Արփի»** ընտանեկան հանգստի գոտում առանց սանհանգույց 4 հոգու համար նախատեսված տնակները արժեն 10.000 դրամ:

Կրկին առանց սանհանգույց 6 հոգու համար նախատեսված տնակի արժեքը 15.000 դրամ է:

Տնակները սանհանգույցով եւ լոգարանով՝ 25.000-30.000 դրամի սահմաններում են տատանվում:

«Artanish Beach House» առանձնատունը ունի 3 հարկ, որտեղ կա հյուրասենյակ, կահավորված խոհանոց, 5 ննջարան, 2 սանհանգույց լոգարանով: Ունի 2 մուտք: Առանձնատունը նախատեսված է 15 հոգու գիշերակացի համար: 1 օրվա արժեքը՝ 50.000 դրամ:

«Վոյաժ» հանգստի գոտում 2-4 անձի համար նախատեսված քոթեջների արժեքը 23.000 դրամ է, luxe-ը՝ 30.000 դրամ: Իսկ 4-6 անձի համար նախատեսվածը՝ 22.000 դրամ:

Փոքրիկների համար ափին առկա են լողավազան, խաղադաշտ, իսկ մեծերի համար՝ սկուտեր, կատամարան: Տարածքում գործում է սրճարան-ռեստորան:

Քոթեջներում առկա են՝ սառնարան, սանհանգույց՝ տաք եւ սառը ջուր:

«Անտառային տնակ» ամառանոցը շրջապատված է սոճիների անտառով, նախատեսված է ընտանեկան հանգստի համար: Տարածքում կա 2 տաղավար՝ մեծ (40-45 տեղանոց) եւ փոքր (8-10 տեղանոց), աղյուսից մանղալ բոլոր պարագաներով, բացօթյա պատշգամբ, խոհանոց (սպասք, սառնարան, տաք ջուր, թեյնիկ), սանհանգույց (առաջին անհրաժեշտության հիգիենիայի պարագաներով): Առանձնատունը ունի անմիջական ելք դեպի լճի ափ (50մ) եւ մոտ է Սեւանավանքին:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 1 մարդ զոհվել է, 25-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑՈՒՅԹ

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ

(ուսումնական հաստատության անվանումը)

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1494-Ն որոշմամբ հաստատված՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 4-րդ կետի համաձայն՝

«Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ

---ի

(ուսումնական հաստատության անվանումը)

Լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը

4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում. հասցեն՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 96:

2024 թվականի հուլիսի 4-ից 2024 թվականի հուլիսի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00 -ից մինչեւ ժամը 16:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի օգոստոսի 5-ին՝ ժամը 13:00-ին Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջում, հասցեն՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս 96:

Տեղեկությունների համար դիմել 033273232, 093159381 հեռախոսահամարներով եւ statecollege@list.ru էլեկտրոնային հասցեով:

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2023-ին գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 948 մլրդ դրամ: Այս մասին երեկ՝ 3-ին, մամուլի ասուլիսի ժամանակ նշեց էկոնոմիկայի փոխնախարար Արման Խոջոյանը:

«Բացի այդ, ձկնաբուծության ոլորտը լրացուցիչ 55 մլրդ դրամի համախառն արտադրանք է ապահովել, եւ միասին մենք ունեցել ենք 1 տրլն 3 մլրդ դրամ համախառն արտադրանք: Քանակական առումով մենք 2023-ին ո՛չ ունեցել ենք գյուղատնտեսական արտադրանքի աճ, ո՛չ էլ՝ նվազում: 2024-ին ամփոփված են դեռեւս առաջին եռամսյակի արդյունքները. Ըստ այդմ՝ գյուղատնտեսական համախառն արտադրանքը աճել է 3,4 տոկոսով:

Տարեցտարի կառավարությունն ավելացնում է գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող բյուջեն: Եթե համեմատենք 10 տարի առաջվա հետ, գյուղատնտեսության բյուջեն ավելացել է 6-7 անգամ: Միանշանակ մարտահրավերներն են ավելացել, որոնք ստիպում են վերադասավորումներ կատարել շուկաների, լոգիստիկ շղթաների»,- ասաց Խոջոյանը:

Նրա խոսքով՝ իրենց հիմնական նպատակը ռեսուրսախնայող տեխնոլոգիաների, գյուղատնտեսության զարգացմանը միտված, նաեւ գյուղատնտեսական նոր մշակույթի ձեւավորմանն ուղղված ծրագրերն են. «Դրանք միտված են ավելի երկարաժամկետ ազդեցություն թողնելու ոլորտի վրա: Ընդհանուր առմամբ, 2024-ին ՀՀ-ից արտահանվել է շուրջ 62 հազար տոննա թարմ պտուղ-բանջարեղեն: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն ավել է 10 հազար տոննայով:

Մենք 2023-ին արտահանել ենք 133 հազար տոննա թարմ պտուղ-բանջարեղեն: Դրա մեջ ծիրանի արտահանումը, օրինակ, կազմել է 30 հազար տոննա: 2024-ին այսօրվա դրությամբ արդեն ՀՀ-ից արտահանվել է 20 հազար տոննա ծիրան:

2024-ին արտահանվել է շուրջ 11,5 հազար տոննա խնձոր, նախորդ տարի արտահանվել էր 3,8 հազար տոննա, այսինքն՝ էապես ավելացել է:

Լոլիկի արտահանումը մի փոքր կչճատվել է. այս տարի արտահանել ենք 6,1 հազար տոննա լոլիկ, 2023-ին արտահանվել է 14 հազար տոննա լոլիկ: Իսկ ահա, այս տարի արտահանել ենք 4700 տոննա վարունգ, իսկ նախորդ տարի այդ թիվը կազմում էր ընդամենը 400 տոննա: Անգամներով ավելացել է ծաղկի արտահանումը»,- ընդգծեց փոխնախարարը:

Նա ընդգծեց, որ այս պահի դրությամբ վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է շուրջ 6 հազար տոննա պտուղ-բանջարեղեն:

Փոխնախարարն անդրադարձել է նաեւ Վերին Լարսին:

Դատելով ընդհանրացված թվերից՝ կարող ենք ասել, որ 2024-ին արդեն այսօրվա դրությամբ շուրջ 10 հազար տոննա կամ շուրջ 20 տոկոսով ավելի թարմ պտուղ-բանջարեղեն է արտահանվել, նշել է էկոնոմիկայի փոխնախարար Արման Խոջոյանը:

«Ես հաճախ չեմ ցանկանում խոսել այն ծրագրերի մասին, որոնք նախագծման փուլում են գտնվում, բայց էկոնոմիկայի նախարարությունում այս պահին մշակման փուլում է գտնվում հենց լոգիստիկայի աջակցության մի ուրիշ նախագիծ»,- ասաց նա:

Հարցին՝ Լարսում այս պահին խնդիրներ կա՞ն, նա պատասխանեց. «Այս պահին՝ ոչ»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՍԵՎԱՆԻ ԱՓԻՆ

2019-ի մայիսին Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. «Մեր խնդիրը Սեւանի առափնյա միջավայրը համապատասխանեցնելն է այն կարգավիճակին, որ Սեւանա լիճն ընդհանրապես ունի որպես տեսարժան վայր, որպես քաղցրահամ ջրի ահռելի պաշար, եւ որպես ՀՀ կարեւոր սիմվոլներից մեկը»:

Սակայն երեկ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը հրապարակեց տեսանյութ, թե ինչ խայտառակ վիճակում են գտնվում Սեւանա լճի ափամերձ տարածքները, որոնք Նիկոլ Փաշինյանը դեռ 2019-ին խոստացել էր մաքրել, սակայն ափամերձ շատ տարածքներ այսօր գտնվում են անմխիթար վիճակում:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց պարզել, թե ինչ է արել այս ուղղությամբ շրջակա միջավայրի նախարարությունը: Նախարար Հակոբ Սիմիդյանի էջից տեղեկացանք, որ դեռ երկու տարի առաջ դեկտեմբերի 27-ին նախարար Սիմիդյանը իր ֆեյսբուքյան էջում հայտարարել էր, թե Սեւանա լճի ճահճացող հատվածները մաքրվում են, անգամ հանրային հեռուստաընկերության անդրադարձը կար, թե ինչպես է մաքրվում Սեւանի ափամերձ տարածքները Սեւան ազգային պարկի միջոցներով:

Նույն Մարտունի Վարդենիս հատվածից ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանի հրապարակած տեսանյութում արձանագրված է, որ լիճը աղբի եւ տիղմի մեջ է, իսկ պատկան մարմինները անտարբերության են մատնել մեր ազգային հարստությունը:

Հիշեցնենք, որ Սեւանա լիճը տարիներ շարունակ այս իրավիճակում է, ծառերի մի հատվածը կտրվել են մինչեւ 2018 թվականը, արմատները թողնված էին ջրի մեջ, բայց Նիկոլ Փաշինյանը, երբ իշխանության եկավ, խոստացավ, որ մաքրելու է լիճը:

Իհարկե, էլի խաբեց, ինչպես մյուս բոլոր դեպքերում:

Այդ ընթացքում Նիկոլ Փաշինյանի կառավարության մեջ փոխվել է 3 նախարար, սակայն Սեւանն այդպես էլ չի մաքրվում:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԱՃՈՒՐԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գ

Աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2024թ. հուլիսի 22-ին, ժամը 12:00-ին «ԱՌ.ՔԵՅ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Էլոյանի կողմից ք. Երեւան, Խորենացի 160 հասցեում կանցկացվի «ԱՌ.ՔԵՅ» ՍՊԸ սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդ՝ 1 ԼՈՏ-ով: Գույքն իրենից ներկայացնում է՝

ԼՈՏ-1.SEAT INCA 1.4 մակնիշի, 773 AU 6101 հաշվառման համարանիշի բեռնատար ավտոմեքենան:

Մեկնարկային գինը սահմանվում է 700.000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 1%-ի չափով մասնակցության վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

- Աճուրդի ներկայացված լոտի մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Մասնակցության վճարը կազմում է մեկնարկային գնի 1 տոկոսը, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը, իսկ նախավճարը մեկնարկային գնի 5 տոկոսը: Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար աճուրդի մուտքի վճարը սահմանավում է 5000 ՀՀ դրամ:

Աճուրդի մասնակցության վճարը, նախավճարը եւ մուտքի վճարը վճարվում են կանխիկ կամ փոխանցումով «ԱՌ.ՔԵՅ» ՍՊԸ սնանկության հաշվին՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղ 1150011527647604 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Հայտի ներկայացմանն առնչվող հարցերը, աճուրդի անցկացման եւ աճուրդի արդյունքներով պայմանավորված հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգով, որը համարվում է աճուրդի կանոնակարգ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /ք.Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդն անցկացվում է դասական եղանակով՝ հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտն ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ՝ Ա. Էլոյանին / 094 411 487 /:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆԻ» ՊԱՏՎԱՎՈՐ ՀՅՈՒՐԵՐԸ

Երեւանի «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը 21-րդ անգամ Հայաստանում կհյուրընկալի Կաննի, Բեռլինի եւ այլ հեղինակավոր փառատոներում հաղթած, ինչպես նաեւ օսկարակիր ֆիլմեր, հնարավորություն կտա հանդիպել անվանի այնպիսի ռեժիսորների հետ, ինչպիսիք են Ատոմ Էգոյանը, Տարսեմ Սինգիը, թատրոնի, կինոյի դերասան Քեվին Սփեյսին եւ այլք:

Հուլիսի 3-ին լրագրողների հետ հանդիպմանը Հայաստանի կինոգործիչների միության նախագահ, «Ոսկե ծիրան»-ի հիմնադիր Հարություն Խաչատրյանն ասաց՝ 21-րդ տարին է՝ շնորհավորում է փառատոնի բացումը: «Այսօր իմ կողքին են այն երիտասարդները, որոնք փառատոնի մեկնարկի ժամանակ ուսանողներ էին եւ որպես կամավորներ աշխատում էին մեզ հետ, իսկ այսօր ղեկավարում են, կազմակերպում են փառատոնի կարեւոր իրադարձությունները»,- ասաց նա եւ շնորհակալություն հայտնեց ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, Երեւանի քաղաքապետարանին եւ բոլոր այն կառույցներին, որոնք աջակցում են «Ոսկե ծիրան»-ի անցկացումը:

Կինոփառատոնի տնօրեն եւ գեղարվեստական ղեկավար Կարեն Ավետիսյանի խոսքով՝ 21-րդ փառատոնը լի է անակնկալներով, կարեւոր շեշտադրումներով: Նա վստահեցրեց՝ իրենց կարեւորագույն նպատակն է կինոյի միջոցով կամուրջ հանդիսանալ Հայաստանի եւ աշխարհի միջեւ: Ավետիսյանը կարծում է՝ կինոն, որը համադրում է արվեստի տարբեր ճյուղերը, համախմբման միջոց է: «Այս տարի փառատոնին նշելու ենք Սերգեյ Փարաջանովի եւ Շառլ Ազնավուրի 100-ամյա հոբելյանները: Ցանկացել ենք մեկ այլ տեսանկյունից հայացք գցել նրանց արվեստի վրա: Նրանք չափազանց տարբեր քաղաքակրթությունների, արվեստների կրողներ են, որոնց միավորում է կինոն: Մեր փառատոնը, որ քաղաքակրթությունների, մշակույթների խաչմերուկ լինելու կարգախոսն ունի, ձոն ու հարգանքի տուրք է մատուցում երկու մեծերին: Նախատեսվում են նրանց նվիրված ցուցահանդեսներ, պերֆորմանսներ տարբեր արվեստագետների մասնակցությամբ»,- շեշտեց Ավետիսյանը:

21-րդ «Ոսկե ծիրան»-ին հյուրերը ոչ թե կարմիր գորգով կքայլեն, այլ հայկական ձեռագործ գորգով: Կարեն Ավետիսյանը շեշտեց, որ գորգը նկարազարդել են ժամանակակից արվեստագետները, գործել են պրոֆեսիոնալ գորգագործները: «Ըստ իս՝ մենք կարող էինք մեզ նման բան թույլ տալ՝ հաշվի առնելով դարերից եկող գորգագործական ավանդույթները եւ համադրել անցյալն ու ներկան»,- ասաց նա:

Կարեն Ավետիսյանն ուրախալի համարեց այն, որ կինոփառատոնին ցուցադրելու են օսկարակիր, Կաննի կինոփառատոնի մրցանակակիր եւ այլ կինոնկարներ, հյուրընկալելու են ականավոր արվեստագետների: «Լիամետրաժ ֆիլմերի ժյուրին կգլխավորի կրկնակի օսկարակիր Ալեքսանդր Փեյնը, տարածաշրջանային համայնապատկեր մրցութային ծրագրի ժյուրիի նախագահը Տարսեմ Սինգին է: Նա մեծ արվեստագետ է եւ ոգեշնչված է Փարաջանովի արվեստով: Պոպուլյար մշակույթում Փարաջանովի դեսպանն է: Հնարավորություն կլինի նրան հարցեր ուղղել բոլոր այն դավադրապաշտական տեսությունների մասին, որոնք կապված են Լեդի Գագայի «911» տեսահոլովակի հետ: Հյուրերից է նաեւ Ատոմ Էգոյանը, որ կանգնած է փառատոնի ակունքներում: Նա 12 տարի չի մասնակցել փառատոնին, բայց կվերադառնա ֆիլմով, որով կմեկնարկի «Ոսկե ծիրան»-ը: Էգոյանը նաեւ կարճամետրաժ ժյուրիի նախագահն է, ինչը մեծ պատիվ կլինի երիտասարդ, սկսնակ ռեժիսորների համար, որոնք առաջին քայլերն են անում այդ մրցութային ծրագրում: Քեւին Սփեյսիին հյուրընկալելու մասին բոլորը գիտեն, միայն կասեմ, որ նա բաց հանդիպում կունենա արվեստասերների հետ, իսկ ուսանողների համար վարպետության դաս կանցկացնի: Նրա այցը ոչ թե հայտնի մարդու սիմվոլիկ մասնակցություն է փառատոնին, այլ ունի կրթական բաղադրիչ»,- շեշտեցին «Ոսկե ծիրան»-ի տնօրենն ու գեղարվեստական ղեկավարը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՌԻՓՍԻՄԵ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԸ ԱՎԱՐՏՈՒՄ Է ԿԱՐԻԵՐԱՆ

Ծանրամարտի Եվրոպայի չեմպիոն, արծաթե եւ կրկնակի բրոնզե մեդալակիր Հռիփսիմե Խուրշուդյանն ավարտում է մարզական կարիերան:

Այս կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը հյուրընկալել է անվանի մարզուհուն եւ շնորհակալություն հայտնել ներդրած ջանքերի, ծանրամարտի պատմության մեջ հետք թողնելու եւ գրանցած հաղթանակներով Հայաստանի պատիվը բարձր պահելու համար:

«Մարզաշխարհում դուք պատմություն եք կերտել: Ձեր նվիրումն ու կամքի դրսեւորումը չափազանց գնահատելի եւ օրինակելի են ոչ միայն մարզիկների, այլեւ, ընդհանրապես, մարդկանց համար, որոնք պետք է անցնեն պայքարի ուղին: Դուք արժանի եք ամենաբարձր մեծարանքին»,- ասել է Կարեն Գիլոյանը:

Հռիփսիմե Խուրշուդյանը եւս շնորհակալություն է հայտնել գնահատանքի եւ իր գործն արժեւորելու համար. «Շնորհակալ եմ, որ իմ կողքին եք: Ամենաբարդ մրցապայքարում անգամ դա միշտ ոգեւորիչ է եւ ուժ է տալիս»:

Հանդիպմանը քննարկվել են ոլորտին առնչվող մի շարք հարցեր, ընթացիկ խնդիրներ:

«ՆՈՍԱՆ» ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՀԱՄԱԼՐԵԼ ԿԱԶՄԸ

Հայաստանի փոխչեմպիոն «Նոային» է միացել Գոնսալո Գրեգորիոն: Պորտուգալացի հարձակվողը կարիերայի մեծ մասն անցկացրել է հայրենիքում: «Բելենենսեշի» պատանեկան թիմերում խաղալուց հետո Գոնսալոն համալրել է գլխավոր թիմի կազմը, այնուհետեւ խաղացել է «Կասա Պիայում», «Լեյշոեշում», «Վիլաֆրանկենսեում», «Պասուշ Ֆերեյրայում»: 29-ամյա ֆուտբոլիստը «Նոա» է տեղափոխվել Բուխարեստի «Դինամոյից», որի կազմում անցկացրած 41 խաղում դարձել է 8 գոլի հեղինակ:

«Ես այստեղ եմ, որպեսզի նվաճեմ ամեն ինչ: Մենք ցանկանում ենք «Նոային» նոր հարթություն տեղափոխել»,- ասել է թիմի նորեկը:

Հիշեցնենք, որ Կոնֆերենցիաների լիգայի որակավորման առաջին փուլում «Նոան» կմրցի հյուսիսմակեդոնական «Շկենդիայի» հետ: Առաջին խաղը կկայանա Աբովյանում՝ հուլիսի 11-ին:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՔԵԿՈՒՄ

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է «ՊԱՏԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ» ԹԱՏՐՈՆԸ

Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնը, որտեղ գործում են նաեւ ստեղծագործական կենտրոններ, վերանորոգվում է: Այս մասին հայտնում են Երեւանի քաղաքապետարանից՝ նշելով, որ առաժմ շինարարություն է փորձասենյակների, միջանցքների ու սանհանգույցների հատվածում:

«Շենքը լիովին վերանորոգվելու է: Այս պահին ընթանում է 1-ին փուլը, ինչը ներառում է ներքին հարդարումը, այսինքն՝ փոխվում են սանհանգույցները, հարդարվում են ներսի սենյակային հատվածներ, փոխվում են ջրահեռացման խողովակները, ինչպես նաեւ դռները եւ պատուհանները», - մանրամասնել է Երեւանի քաղաքապետարանի շինարարության եւ բարեկարգման վարչության պետի ժ/պ Արմեն Հարությունյանը:

Աշխատանքների ղեկավարն ընդգծել է, որ նախկինում անցկացված օդափոխության համակարգն ամբողջությամբ փոխվում է, անցկացվում է հովացման եւ ջեռուցման նոր համակարգ:

Վերանորոգման հաջորդ՝ առավել ընդգրկուն փուլը ներառում է դահլիճն ու բեմը: Որոշ հատվածի փայտե կառուցվածքների կազմաքանդումն արդեն սկսել են, որովհետեւ այլեւս ենթակա չեն շահագործման:

«Ավարտը նախատեսվում է 2025 թվականին: Պետք է առավելագույն ջանքեր գործադրենք, որ կարողանանք մեր երեւանցիներին նորովի վերադարձնել Պատանի հանդիսատեսի թատրոնը»,- նշել է Արմեն Հարությունյանը:

Կվերականգնվեն նաեւ շենքի արտաքին պատերը՝ չխախտելով ճակատի ճարտարապետական կերպը: Շուրջ մեկ դար առաջ հիմնադրված թատրոնը վերանորոգումից հետո կներկայանա ամբողջությամբ արդիականացված:

ՄԱՀԱՑԵԼ Է ԳՈՅ ԹԱՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ

Կյանքից հեռացել է Գոյ թատրոնի հիմնադիր, բեմաստեղծ Մկրտիչ Մկրտչյանը:

Գոյ թատրոնի անձնակազմը եւ «Ժողովուրդ» օրաթերթը իրենց ցավակցությունն են հայտնում նրա ընտանիքին եւ հարազատներին:

● *Հուլիսի 9-ին՝ ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Կուլիսներում, կամ թատրոնի անատոմիա» կատակերգությունը: Տոմսերի արժեքը՝ 3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՄԱՔՍԱՅԻՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ Երեւանում գրանցված կազմակերպությունը երրորդ երկրից ապրանքներ ներմուծելիս մաքսային ձեւակերպումները կարող է արդյոք իրականացնել Սիսիանում:

Կարո Հարությունյան (38 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի 2003 թվականի հուլիսի 4-ի N03/42-Ն հրամանի 1-ին կետի համաձայն՝ կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների եւ տրանսպորտային միջոցների մաքսային ձեւակերպումների իրականացման վայրեր են այն տարածաշրջանային մաքսատները, որոնց գործունեության գոտին ընդգրկում է տվյալ կազմակերպության գտնվելու վայրը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի N 865-Ն որոշման 2-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ Արարատյան տարածաշրջանային մաքսատան գործունեության տարածք է հանդիսանում Երեւանը, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզերի վարչական տարածքները, ուստի Երեւանում գրանցված կազմակերպության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային ձեւակերպումների իրականացման վայր է համարվում Արարարատյան տարածաշրջանային մաքսատունը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է թույլատրել «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգով հայտարարագրված ապրանքների բացթողնումը կամ ներմուծված ապրանքների նկատմամբ կիրառված «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգի ժամկետի երկարաձգումը միայն մեկ անգամ մինչեւ երկու տարին չգերազանցող ժամկետով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է թույլատրվում փոփոխել աշխատանքի էական պայմանները:

Մարինե Մարգարյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատանքի վայրի, աշխատանքի վարձատրության չափի եւ (կամ) այն որոշելու ձեւի, արտոնությունների, աշխատաժամանակի (աշխատանքի եւ հանգստի) ռեժիմի, տարակարգերի եւ պաշտոնների անվանումների, աշխատանքային պայմանագրի տեսակի եւ (կամ) գործատուի փոփոխման դեպքում թույլատրվում է փոփոխել աշխատանքի էական պայմանները: Փոփոխելու դեպքում գործատուն պետք է գրավոր ծանուցի մինչեւ 1 տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, 1-5 տարի աշխատողին՝ 35 օր առաջ, 5-10 տարի աշխատողին՝ 42 օր առաջ, 10-15 տարի աշխատողին՝ 60 օր առաջ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելիս մի կողմը գրավոր առաջարկում է մյուս կողմին լուծելու պայմանագիրը: Համաձայնության դեպքում մյուս կողմը 7 օրվա ընթացքում պետք է ծանուցի առաջարկ ներկայացրած կողմին, որից հետո կնքվում է գրավոր համաձայնագիր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Քաղաքի խանութ-սրահներից մեկում՝ շարժասանդուղքի մոտ, ահա այսպիսի գրառում է փակցված: Այս ամենում գոնե մխիթարող կլիներ, եթե գրված լիներ «էսկալատոր» բառի հայերեն համարժեքը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 12 +25 + 29
Կոտայքի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 19+ 21 +30 + 33
Գեղարքունիք	+ 7+ 11 +24 + 28
Լոռի	+ 9 + 14 +25 + 28
Տավուշ	+ 14+ 19 +29 + 33
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 +29 + 33

Արարատ	+ 19 + 21 +34 + 36
Արմավիր	+ 18+ 20 +34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 19 +33 + 35
Սյունիքի հովիտներ	+ 18 + 21 +31 + 34
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16 +25 + 28
ԼՂՀ	+ 12 + 15 +24 + 26
Երեւան	+ 22 + 24 + 32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.7.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*